նակաւոր օթեւանը կամ հանդստարանը, երբ 1725 թուին Դարբաղի հայ մէլիքներին յօգնութիւն հասնելոյ համար եկել, հասել էր Դարբանդ, և քանի օր մնացել էր այս օթեւանում, որը նոյնութեամբ պահուած է ցայսօր, որոյ վրայ մի նոր շինութիւն շինելով հին շինութիւնը մէջ է առել։ Այս շինութեան առաջին դրած կայ մի հին թնդանօթ, գուցէ Մեծին Պետրոսի ժամանակից մնացած։ Դարբանդի բերդի վերին մասում բարձրութեան վրայ կայ և առանձին բերդ ամուր և բարձր պարիսպներով, որոյ միակ դուռը մեծ բերդի միջից է, և այս դրան առաջին կայ մի լաւ աղբիւր։

Այս միջնաբերդի մէջ կան բաւական և նոր շինուածներ և մի ջրամբար գետնի տակին, որոյ տանիքի լուսամտիցը մէջը պարզ երեւում էր. բայց դուռ չունէր մէջը մտնելու. միջին բաւական ջուր կար։ Միջնաբերդի գնից և պարսպի և բուրջերի վրայից կանգնողը նայում է ամբողջ քաղաքի վրայ, և մի զուարճալի տեսարան է ներկայացնում մարդոյ առաջին քաղաքը և ծովը. քաղաքը իրեն զեղեցիկ շինուածքներովն և եկեղեցիներովն, իսկ ծովը նաւերովն ու նաւակներովն, թէեւ ոչ մէկովն և ոչ միւսովն կարող է համեմատուել Բաղուին, բացի միջնաբերդի բարձրահայաց վայելուչ դրութեամբն, ըստ որում ինչպէս ասացի, ոչ միայն քաղաքն ու ծովն են տեսնողի աչքի առաջին երեւում, այլ և դէպի հարաւ տարածուած քաղաքի ընդարձակ այգիներն, և այնուհետեւ լայնատարած Վատնեան դաշտը, ուր ըստ ազգային և Աղուանեան պատմութեան (Մովսէս Կաղանկատուացի) նահատակուել է Աղուանից ազգի առաջին Կաթուղիկոս և մեր սուրբ Գրիգոր Լուսաւորչի թոռն Գրիգորիս, որոյ նահատակութեան տեղում, Մոլլա Խալիլ գիւղի մօտ, այսօր իսկ կայ սուրբ Գրիգորիսի անուամբ մատուռն, որը նորոգել է Դարբանդարնակ Կաճկաճեան պ. Սարգիս Ստեփանեանի կին բարեպաշտուհի Եղիսաբէթ տիկինը 1879 թուին, ինչպէս դրան ճակատի արձանագիրը ցոյց է տալի որ ըստ այսմ.

«Ես տիկին Եղիսաբէթ Կաճկաճեանց կառուցի մատուռս ի յիշատակ իմ և ամուսնոյս։ Տէր յիշէ